նալ 'ի Կոստանդինուպոլիս, պատճառն անդիտելի։

Իսկ գիւղականք Բեթղեհէմի 'ի պատճառս գործոց եւ շփոթութեանցն Յունաց, եւ պահանջելոյ յուխտաւորաց զՂափարն՝ ճեղքեցան յերկուս, կէսք մնալ ամրացան 'ի վանս Յունաց, և այլք մնացեալ արտաքս պատերազմէին ընդ միմեանս, և ապանին զսմն յազգէ Լատինաց, որոյ վասն արգելան Յոյնք գնալոյ 'ի Բեթղեհէմ։

Լուեալ Կուսակալին Դամասկոսի զամենայն անցս Երուսաղէմի՝ առաքեաց 1000 Մղրբպի զօրականս, որոց զօրավար կարգեալ էր զայրն քաջ Ապուզուրեան։ Հասեալ սորա Յերուսաղէմ (1810։ յ8 Յունվարի) յաւուր շաբաթու եմուտ 'ի քաղաքն, և 'ի Կիւրակէի սկսան ժողովիլ եէնիչէրիք, և ոմանց փախչիլ և թագչիլ, և այլք խորհէին մտանել 'ի վանս Ս։ Յակոբայ, և անտի տալ պատերազմ ընդդէմ թշնամւոյն, այլ վաղ իմացեալ քաղաքապետին՝ խափանեաց զխորհուրդս նոցա, կարգելով պահապան զօրս 'ի դուռն վանացս։ Եւ ոմանք յեէնիչէրեաց անտի անձինք իբրեւ 18 գնացին 'ի վանս Ս։ Փրկչի, և կալեալ զդռնապանն դան հարին և կորզեցին 'ի ձեռաց նորա զբանալի դրանն, և մտեալ ամրացան անդ։ Հասին անդ և զինուորք և պատեցին զվանքն և սկսան պատերազմիլ ժամս իբրեւ 4։ և իբրեւ ոչ կարացին ածել զնոսա 'ի հաւանութիւն, ածին զթնթանօթս և սկսան ումբակոծել զպարիսպ վանացս, յորմէ խարխալեալ կործանեցաւ որմն հիւսիսային, և բացաւ խրամ յերկուս տեղիս, և մտեալ անտի 'ի ներքս կալան զոգիս 14, և որոնեալ գտին զայլ անձինս որք իջեալ էին 'ի ջրամբարն, և հատեալ զգլուխս ամենեցուն բերին առ քաղաքապետն, որ կայր առաջի դրան քաղաքին։ Միաբանք և ծերունի Յակոբ եպիսկոպոսն նուաղեալ հազիւ անկան 'ի Ս։ Յակոբ, զկարասիս վանացս եւ զանօթս եկեղեցւոյն ետուն յաւարի, մինչեւ հանել զբեւեռս եւ զնիգս դրանց։ Եւ 'ի բերդին խեղդամահ արարին զարս 12։ ապա արձակեցին անտի հրանօթս՝ աւետելով քաղաքին զյաղթութիւնն, եւ զայլս արկին 'ի բանտ։ սաստկացաւ լալ և կոծ 'ի քաղաքին մերձաւորաց եէնիչէրեաց։ Սակայն գլխաւորք այլազգեաց գժտմնեալ իմն էին ընդ այս գործ, թէ չէր օրէն սակս Յունաց կոտորել զայս քան անձինս։